# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

### ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

**Բովանդակային** առումով թեստը բաղկացած է 3 մասից՝

- Մայրենի. առաջադրանքների քանակը՝ 28, որոնցից 21-ը ընտրովի, 7-ը՝ կարճ պատասխանով
- Մաթեմատիկա. առաջադրանքների քանակը՝ 28, որոնցից 21-ը ընտրովի, 7-ը՝ կարճ պատասխանով
- Ես և շրջակա աշխարհ. առաջադրանքների քանակը՝ 4, որոնցից 3-ը ընտրովի, 1-ը՝ կարճ պատասխանով:

**Կառուցվածքային** առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

- *Ընտրովի պատասխանով* առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:
- *Կարճ պատասխանով* առաջադրանքների դեպքում տրվում են 7- ական տարբերակներ, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում: Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

*Մաթեմատիկա* առարկայից որպես կարճ պատասխանով առաջադրանքներ կարող են լինել նաև խնդիրներ, որոնց համար պատասխանի տարբերակներ նշված չեն:

## Առաջադրանքների նմուշ-օրինակներ

## Մայրենի

*Ընտրովի պատասխանով*

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:** (1 միավոր)

1) կայարան, ստորադասական, միջնակարգ, արտահոսք
2) պարբերաբար, վարկառու, ժողովրդական, ակնահաճո
3) ելևէջում, համադրական, հարկադրանք, տարակարծիք
4) թռչնավանդակ, սառցապատ, արժանահիշատակ, մտացրիվ

*Կարճ պատասխանով*

**Ո՞ր շարքերում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ կա: Նշել դրանց համարները:** (1 միավոր)

1. Կարսի Թագավորություն, Որոտանի լեռնանցք
2. Մոկաց Սուրբ Մինաս վանք, Հիմալայան լեռներ
3. Վան Գոգ Վինսենթ, Հայկական պար լեռնաշղթա
4. Խաղաղ օվկիանոս, Վիշապաքաղ Վահագն
5. Թանգարանների միջազգային օր, Նավասարդյան խաղեր
6. Փոքր Արջ համաստեղություն, Ծաղկոտն գավառ
7. «Մարտական խաչ» շքանշան, Էջմիածնի հոգևոր ճեմարան

## Մաթեմատիկա

*Ընտրովի պատասխանով*

Տրված հաջորդականության յուրաքանչյուր անդամ՝ սկսած երկրորդից, հավասար է նախորդ և հաջորդ անդամների գումարի մեկ երրորդին: Հաջորդականության երրորդ և չորրորդ անդամները համապատասխանաբար հավասար են 13-ի և 31-ի: Գտնել հաջորդականության առաջին անդամը: (1 միավոր)

1) 11
2) 12
3) 13
4) 14

*Կարճ պատասխանով 1*

*Սուսաննան ուներ 2 անգամ ավելի կոնֆետ, քան Գոհարը: Երբ մայրիկը Գոհարին տվեց ևս 5 կոնֆետ, նրանք ունեցան հավասար քանակով կոնֆետներ:*

Սկզբում քանի՞ կոնֆետ ուներ Սուսաննան: (1 միավոր)

*Կարճ պատասխանով 2*

**«579:3» օրինակի լուծման՝ անկյունաձև բաժանման հիմքում ընկած տեսական գիտելիքներից (կարողություններից) որո՞նք են սխալ:** (1 միավոր)

1. Մնացորդով բաժանում
2. Թվի դիտարկում գումարելիների գումարի տեսքով
3. Արտադրյալի տեղափոխական հատկություն
4. Կլոր հարյուրավորի բաժանում թվի
5. Կարգային գումարելիների բաժանում թվի
6. Գումարը թվի բաժանելու հաշվեկանոն
7. Թվի ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով

## Ես և շրջակա աշխարհ

*Ընտրովի պատասխանով*

Ո՞ր թվականին է հիմնվել Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը: (1 միավոր)

1) 1922
2) 1946
3) 1965
4) 1937

*Կարճ պատասխանով*

Հայաստանի Հանրապետության զինանշանի վրա ո՞ր չորս արքայատոհմերի զինանշաններն են պատկերված: (1 միավոր)

1. Երվանդունիներ
2. Ռուբինյաններ
3. Արտաշեսյաններ
4. Բագրատունիներ
5. Արծրունիներ
6. Արշակունիներ
7. Հայկազունիներ

## ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (բացառապես իմաստաբանության առումով՝ բառի բացատրություն, հոմանշության կամ հականշության հնարավորություն, համանունություն), Եր., 1976
2. Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967
3. Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Եր., 2014
4. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975
5. Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., 2011
6. Յու. Ավետիսյան և այլք, Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան, Եր., 2024
7. Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981
8. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Եր., 2018
9. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980
10. Հանրակրթական դպրոցի 2-4-րդ դասարանների համար գործածության երաշխավորված «Ես և շրջակա աշխարհ» առարկայի դասագրքեր:
11. Հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար գործածության երաշխավորված «Մաթեմատիկա» առարկայի դասագրքեր:


**Ծանոթություն:** Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: